ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-21-7/44-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06 . 10.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից, և «Մոսէսքո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **02.09.2021թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-21-7/44-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել Համաձայնագիրը՝ սահմանելով գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Համաձայնագրի Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով, Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ Հավելված № 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 23,013,280.00 (քսաներեք միլիոն տասներեք հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Մոսէսքո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 75
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Իդեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 20500224017711001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04214892
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված № 1
№ ԳՀԱՊՁԲ-21-7/44-1 պայմանագրին կից
№ 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

h/h	Անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)	մատակարարումը մինչև 30.11.2021թ
1	փոխանցման տուփի յուղեր/ՍԱԵ 80W90	կգ	3,500.00	1,740.00	6,090,000.00	3,500.00
2	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր/Վերետիոն ԱՈՒ	կգ	1,000.00	2,349.60	2,349,600.00	1,000.00
3	Քսուքներ/Ցիատիմ-201	կգ	1,000.00	2,320.00	2,320,000.00	1,000.00
4	Քսուքներ/Ճոպանային 39ՈՒ	կգ	50.00	1,992.00	99,600.00	50.00
5	Քսուքներ/ԳՕԻ-54պ	կգ	5,000.00	2,366.40	11,832,000.00	5,000.00
6	հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ/ՊԷՍ-5	կգ	2.00	161,040.00	322,080.00	2.00

Հավելված № 2
№ ԳՀԱՊՁԲ-21-7/44-1 պայմանագրին կից
№ 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Գնման առարկայի			
h/h	**անվանումը**	**CPV կոդը**	**Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝**
			IV եռամսյակ
1	փոխանցման տուփի յուղեր/ՍԱԵ 80W90	09211410/1	6,090,000.00
2	հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր/Վերետիոն ԱՈՒ	09211660/4	2,349,600.00
3	Քսուքներ/Ցիատիմ-201	24951100/2	2,320,000.00
4	Քսուքներ/Ճոպանային 39ՈՒ	24951100/10	99,600.00
5	Քսուքներ/ԳՕԻ-54պ	24951100/13	11,832,000.00
6	հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ/ՊԷՍ-5	09211611/3	322,080.00

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
Մոսէքսո ՍՊԸ-Տնօրեն

Կ. ԳԲԻԳՈՐՅԱՆ